

**ՏՆԱՅԻՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԾՐԱԳԻՐ
ԾԱՆՈՒՑՈՒՄ ՍՏԱՑՈՂԻՆ՝ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐՈՂԻ ԱՐՏՈՆՎԱԾ ՉԼԻՆԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՐԱԿԱԶՐԿՈՒՄ՝ 1-ԻՆ ԿԱՐԳԻ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ-
ՀԵՏԱԳԱ ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄ**

**[ԲԱՐԵՎԵՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ, ԲԱԺԻՆ 12305.81]
(ՀԱՍՑԵԱՏԵՐ)**

Վարչաշրջան՝ _____

Ծանուցման ամսաթիվը՝ _____

Ծառայություն տրամադրողի անունը՝ _____

Ստացողի անունը՝ _____

Ստացողի գործի համարը՝ _____

IHSS գրասենյակի հասցեն՝ _____

IHSS գրասենյակի հեռախոսահամարը՝ _____

Ուղղված՝ Տնային աջակցության ծառայություններ (IHSS) Ստացողին

Սույն ծանուցման ամսաթվից քսան (20) օր անց, այն անձը, ում ընտրել էք՝ որպես ձեզ IHSS-ի ծառայություններ տրամադրող, _____, իրավունք չունի վարձատրություն ստանալ IHSS ծրագրից՝ ձեզ կամ որևէ այլ անձի ծառայություններ տրամադրելու համար: Եթե տվյալ անձը ձեզ ծառայություններ է տրամադրել, ապա նա իր տրամադրած ծառայությունների համար կարող է վճարվել միայն _____ միջոցով:

Տվյալ անձի՝ աշխատանքում նախնական ընդգրկվելուց հետո, վարչաշրջանը/Պետական իշխանության մարմինը/Շահույթ չհետապնդող միավորումը նրա քրեական անցյալի ստուգման միջոցով տեղեկացել է, որ նա մեղադրվում է այնպիսի հանցագործության (ներքի) մեջ, որի պատճառով իրավունք չունի աշխատել որպես IHSS-ի ծառայություններ տրամադրող կամ ծառայությունների տրամադրման համար վարձատրություն ստանալ IHSS ծրագրի կողմից՝ համաձայն Բարեկեցության և Հաստատությունների մասին Օրենսգրքի 12305.81 բաժնի: Այն հանցագործությունը (ներքը), որը որակազրկել է (են) նրան, թվարկված է ստորև.

- Տարեց անձի կամ կախում ունեցող չափահասի հանդեպ բռնություն, և/կամ
- Հատկորոշված բռնություն երեխայի հանդեպ և/կամ
- Խարդախություն կառավարության առողջապահության պահպանման կամ աջակցող ծառայությունների ծրագրի դեմ:

Տրամադրողի քրեական դատապարտման վերաբերյալ տեղեկատվությունը չափազանց զգայուն բնույթ է կրում և պետք է խիստ գաղտնի պահվի: Ձեզ օրենքով արգելվում է այս տեղեկատվության ցանկացած մաս որևէ անձի կամ հաստատության հայտնել:

Քանի որ այս ծառայություն տրամադրողը ճանաչվել է որպես IHSS-ի ծառայությունները մատուցելու իրավունք չունեցող, դուք պետք է ընտրեք մեկ այլ անձի՝ գործելու որպես ձեր IHSS ծառայություն տրամադրող: Եթե դուք շարունակեք ծառայություններ ստանալ այս անձից, դուք պատասխանատու կլինեք վճարել նրան ձեր սեփական միջոցներից՝ ձեզ տրամադրված ծառայությունների դիմաց:

Եթե այս ծանուցման վերաբերյալ հարցեր ունեք կամ օգնության կարիք եք զգում այլ տրամադրող գտնելու հարցում, ապա կարող եք զանգահարել _____: